Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն – Կեդրոնական Վարչութիւն
**HOMENETMEN Sports And Scouting Organization World Committee**

Established 1918

Պէյրութ, 24 Մայիս 2018
***Նամակ թիւ 534***

***Գյումրու հարգարժան քաղաքապետ՝***
***Պրն. Սամվել Բալասանյան***

Գառնիկ Մկրտիչեան
(Ատենապետ – Լիբանան)

Րաֆֆի Կէօվօղլանեան
(Ատենադպիր – Լիբանան)

Վաչէ Նաճարեան
(Գանձապահ - Լիբանան)

Իլխան Եղիայեան
(Լիբանան)

Բագրատ Եսայեան
(Հայաստան)

Օշին Փիրումեան
(Հայաստան)

Անդրանիկ Պահարեան
(Ֆրանսա)

Ալէք Խաչատրեան
(Անգլիա)

Վիգէն Դաւթեան
(Արեւմտեան Միացեալ Նահանգներ)

Հրաչ Մեսրոպեան
(Արեւելեան Միացեալ Նահանգներ)

Վիգէն Քորթեան
(Աւստրալիա)

Մոսիկ Թօփուզեան
(Գանատա)

Արմանտօ Թորգոմեան
(Հարաւային Ամերիկա)

2018 թվականը նշանավորվում է մի շարք կարևորագույն իրքեյլաններով: Հայաստանի առաջին հանրապետության 100ամյակի հետ զուգահեռ լրանում է նաև Հայաստանում և Սփյուռքում իր գործունեությունը ծավալած ամենախոշոր երիտասարդական կազմակերպության՝ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միության (ՀՄԸՄ) հիմնադրման 100 տարին:

ՀՄԸՄ-ն այսօր ներկայացված է աշխարհի 26 երկրներում, 110 մասնաճյուղերով, շուրջ 40.000 անդամներով: Իսկ 1989 թվականից նաև Հայաստանում գրանցված է ՀՄԸՄ-ՀԱՍԿ (Հայաստանի Ազգային Սկաուտական Կազմակերպություն), որը այս պահին իր գործունեությունն է ծավալում 14 մասնաճյուղերով՝ Երևանում, Գյումրիում և տարբեր մարզերում իր հարկի տակ հավաքելով շուրջ 2000 պատանի-երիտասարդների:

Կազմակերպության 100ամյակի առիթով նախատեսված են մի շարք միջոցառումներ, այդ թվում Գյումրիում Վահան Չերազի արձանի տեղադրումը:

Վահան Չերազը առաջին սկաուտապետն էր, ով Հայաստանի առաջին Հանրապետությունում հիմնեց սկաուտական շարժումը և իր գործը սկսեց Ալեքսանդրապոլից (Գյումրի): ՀՄԸՄ-ի հիմնադրման 100ամեակի առիթով Կենտրոնական Վարչությունը որոշել էր, Վահան Չերազի արձանը տեղադրել հենց Գյումրի քաղաքում, որում դուք սիրով ընդառաջել էիք: Արձանի տեղադրումը Գյումրին կդարձնի համահայկական այս մեծ կազմակերպության բազմահազար անդամների համար ուխտավայր:

ՀՄԸՄ-ի Կենտրոնական Վարչության պատվիրակության վերջին հանդիպումի ժամանակ հարգարժան քաղաքապետին հետ, որոշվեց արձանը տեղադրել Վ. Չերազի և Աբովյան փողոցների հատման հատվածում:

Ըստ այդմ խնդրում ենք կազմակերպել հանրային լսումներ արձանի տեղադրման վայրի նպատակահարմարության վերաբերյալ:

Գործակցության լավագույն մաղթանքներով՝

**Ի Դիմաց՝**
**Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան**
**Ատենադպիր՝** **Ատենապետ՝**

HOMENETMEN CENTRAL COMMITTEE

**Րաֆֆի Կէօվօղլանեան** **Գառնիկ Մկրտիչեան**



15.05.2018թ
6084.